

ՔԱՃԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
 Պուշկարիոյ համար
 Տարեկան 10 Պր.
 Վեցամսեայ 5 »
 Արտասահմանի հա-
 մար տարեկան 12 »
 Վեցամսեայ 6 »
 ԿԱՆԻՍԻՅԱՆ ՎՃԱՐՆԵԼԻ
 —)(—
 Գրութիւնք եւ չեմ տրուիր
 —)(—
 Իրանուցման տոյր 20 սան-
 քիւն է. երեքին աւելի սան-
 քաներու համար 20 Օ/0
 գնդ կրնայ:

ՇԱՐՇՈՒՄ

Նախկ եւ դրամ դրկն
 Խմբագրութեան հասցիսն.

Редакция на вѣстникъ
 «Шаржумъ»
 Варна.

Redaction du journal
 «Charjoum»
 Varna (Bulgarie).

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
 ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԻ ՉՈՐԵՔԵԱՐԹԻ ԵՒ ՇԱՔԱԹ ՕՐԵՐԸ

ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ

ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ

Отговорникъ: Д-ръ Т. Хр. Стояновъ.
 АДВОКАТЪ

ԿՐԹԱԿԱՆ ՅԱՐԿԵՐ

—)(—

Այնքան թափով ու յուսալիւր իրարանցումով սկսուած և կարճ ժամանակի մէջ վիժած, քայ-քայման ենթարկուած վառնայի կրթական գործը, տխուր խոհեր կը ներշնչէ մեզ:

Եթէ իրերու այս անդոյն վիճակը միայն մեր քաղաքին մէջ իշխող ըլլար, կացութիւնը նուազ վրդովիչ կը դառնար Պուլկարիոյ հայ գաղութին համար: Իժմաբար նոյն վիճակն է զոր կը ներկայացնեն գրէթէ բոլոր հայաբնակ քաղաքները որոնք գրգռուց մը կը պահեն:

Իպրոցներու բարեկարգութիւն, այս է ամէն թաղային մարմիններու և հասարակութեան իղձը:

Այս տեսակ իղձ մը կրելը ինքնին գովելի է հարկաւ. բայց միայն իղձ մը կրել առանց անոր իրականացման միջոցներն ալ ազդուապէս ձեռք առնելու, նըմանիլ է այն երախտին որ իր վառվառն երեւակայութիւնով այնքան սիրուն երազներ կը յօրինէ:

Բնականաբար դպրոցներու անկերպարան վիճակը երկու պատճառներէ առաջ կրնայ գալ. այն է անկարող պաշտօնեաներուն ներկայութիւնը որ տեղի կունենայ «պաշտպանութեամբ» և երկրորդ՝ գրամական անձկութիւնը: Եթէ խնդիրը մօտէն դիտենք պիտի տեսնենք որ չարին արմատը սեւիլի երկրորդ պատճառին մէջն է. որովհետեւ լաւ ուսուցիչներ ալ ունեցած ենք մենք:

Իպրոցները հասոյթ չունին, և կամ այնքան ոչինչ բան մըն է որ հազիւ նարեկ-Սաղմոսի դրութեամբ կրթութիւն մը տալ կը ներէ: Թաղ. մարմինը, որ գործ մը տեսնալ կուզէ իր օրով, ընդհանրապէս ամբողջ քաղաքին համակրութիւնը չվայելեր: Ստուար մաս մը կայ որ հակառակ է, որ իրեն չաշակցիլը, և նոյն իսկ իր վաւակը ազգ. դպրոցը չլրկելու չափ առաջ կը իրթայ: Ատկէց կը ծնի ներկայիս անձկութիւն մը որուն մէջ կը տարկուի հոգաբարձու-

թիւնը, իր հետ չարչրկելով ամբողջ ուսուցչական դասը: Բայց դարձեալ արհամարհելով հակառակորդներուն աշակցութիւնը, ինքի գլխուն ասպարէզ կը նետուի, օգային հասոյթներ կը ստեղծէ որոնք չեն ուշանար դառն իրականութիւնը պարզելէ. ու ահա դպրոցը կաւրուի. տղաք փողոցը կը մնան և կամ արգահատելի վիճակի կը մատնուին, մինչև այն օրը ուր նոր մարմին մը գայ, որուն նոյն անյաշողութիւնը կը սպասէ, և այսպէս շարունակաբար:

Պաշտօնավարութիւններու այս անմիտ թաւալումը անշուշտ չէ որ վերջ մը պիտի գնէ մեր կրթութեան գործին խեղճուկ վիճակին: Ամէն միջավայր, անգամ մը որ իր կամքովը ու համոզմամբը վստահելի և ձեռնհաս մարմին մը ընտրեց իր ազգային կրթական գործերը ղեկավարելու, պէտք չէ կարծէ թէ իր գործը հոն կաւարտի և թէ ինք ալ զերծ է ամէն պարտականութենէ: Իր օժանդակութիւնը ներկայիս թէ բարոյական միշտ անպակաս ընելու է այն յարկէն ուր իր և ազգատին զաւակը պիտի կրթուին: Այսպէսով միայն կրնայ վերջ տրուիլ իրերու տրխուր վիճակի մը ուսկից կը տառապին հաւասարապէս սղայ, ծնողք, ուսուցիչ և ազգ: Եթէ հիմակուան կծծիւթիւնը յաւերժանայ, յետագիւրթիւնն ալ նոյն յամառութեամբ անխուսափելի կերպով զուգընթաց պիտի երթայ. անոր բնական և հետեւապէս անողոք հետեւանքն է ասիկա:

Պիտի թողունք որ մեր մէջ վճանան, ազգի մը համար ամէնէն անհրաժեշտ այդ յարկերը, անոնք որ մոգական ձեռքով մը անհատը կը ձեւափոխեն և արժէք մը կուտան անոր, անոնք վերջապէս որ բարոյականի, զգացման և իտէալի բարձունքը կը հանեն ամբողջ ազգ մը, մանաւանդ մեզ պէս գերի ազգ մը, և իբր յեղափոխութեան նախընթաց զօրանոցներ և զինանարներ, առաջինն են որ զէնք

մը կը գնեն ազգի մը զգայուն և քաջերու սերունդ զաւակներու ձեռքը, գոռ՝ և գրէթէ աստուածային ձայնով մը գոչելով անոր:

—Գնա՛, հայրենիքդ ազատէ...
 ԳԱՄԵՐ-ԱՐՇԱԽԻՐ

ՕՐԸ ՕՐԻՆ

ՃԱՆԿԻՒԼԵԱՆ

—)(—

Ո՛չ, ես չեմ կրնար առանց յուզումի անունդ բերանս առնել: Գեղի համար, իբրեւ նախատինք, ոսոխիդ մէկը կը գրէ որ «փապուճճի» էր, փողոցի մը անկիւնը: Ես չեմ ջանար ասիկա հերքելու. գուցէ աւելի չնչին բաներով ալ առուտուր ըրած ըլլաս. ասիկա իմ փոյթս չէ. միայն ես կը պնդեմ որ, ինչ որ ալ ծախած ըլլաս դուն հասարակաց շուկային մէջ, ներթական ինչ սեղմ վիճակ ալ ունեցած ըլլայիր, ամենքին յայտնի է որ կիւնդ ու զաւակներդ քու քրտինքիդ հացը կերան, դուն քեզմով ապրեցա՛, ո՛չ մէկ աղտոտ դըրամ՝ ձեռքերդ չարտաւորեց, ո՛չ մէկ կասկած չկրցաւ մօտենալ անուանդ բոլորտիքը:

90ի դէպքերուն մէջ, որ պուսական դէպքերու նախակարապետներէն ամենէն աւելի ուժեղն եղաւ, բերնէ բերան պտտեցար դու. մարդ չի մնաց որ վրադ չխօսի: Զինուորական ատենի մը մահավճիւր՝ կաղախանին գերաններն ու խեղճանքը աչքիդ առջև շողացուց, և սակայն, մթութեան այդ խորչերէն ալ քեզմէ ցոլքեր ելան դուրսը ու վհատ ոգիներու մէջ նոր կեանքը արթուն պահեցին: Այնուհետեւ մահավճիւր փոխուեցաւ հարիւր տարուան բանտարկութեան, և Աքեա իր երկաթէ գառագեղներու մէջ սեղմեց քեզ ու անոնք՝ որ 90ի ամենէն համակրելի, ամենէն ակնածելի դէմքերէն եղան:—

Պալատէն, Խորէնի պատրիարքութեան առաջին տարին, նըւէր զրկուած էր օտմ. թուղբան: Արմաշի վանահայրը, շտես ու

բանէ մը չհասկցող մարդու պէս, շուրջառով, բուրվառով ու ազօթքներով դիմաւորեց պալատին նուէրը: Տպաւորութիւնը խիստ տխուր եղաւ. բարեպաշտ ոգիներու համար՝ ներքին վերաւորանք մըն էր դէպքը իրենց անխառն ջերմեանդութեանը մէջ. ըմբոստ ոգիներու համար՝ անպայման ցածութիւն էր արտմեր հոգեւորական իշխանութեան կողմէ. իսկ նոր մեծացողներու համար՝ աններելի բան մըն էր, սրբապղծութիւն մեր բոլոր ներկայ ու անցեալ կեանքին: Ու այդ օրէն «հօշընտու» մը բոյն դրաւ ամէն դասակարգի հոգիներուն մէջ:

90ի ցոյցի կրակոտ ժամերուն՝ երբ պատրիարքարանի դուռները ու սրահները գոյ ելան յեղափոխականներու ասկեղ տեսքէն, վրէժխնդրութեան առաջին փորձը առաւ օտմ. թուղբան՝ որ Աշըղեանի խունկերովն ու ազօթքներով՝ պատրիարքարանի մեծ սրահին մէջ կը կախուէր հանդարտ: Հերոսի ձեռք մը կերկրնայ մէկէն «սրբազան» նուէրին, որ ճարճատելով կիլնայ ոտքերու տակ: Ալ չկար թուղբան: Ճանկիւլեանը յաղթական ոտքերով կը կենար անոր բեկորներուն վրայ: Վրէժը լուծուեցաւ. դէպքին լուրը դուրս արձագանգուեցաւ. ու ամէնքը ծափ զարկին:

Այդ մարդը, ալ իսկապէս բուրբ կատարութիւն, դէպքին զսպանակները ձեռքերուն մէջ ունեցողի մը պէս, օձի ճակատութիւնով, ամէն կէտերու վրայ երեւցաւ. եկեղեցիին բեմը, գաւիթները, բակը, շրջապատէն դուրս. յուզումը իրմով հասաւ իր ծայրագոյն աստիճանին: Պատրիարքը, գողդղացող ու մահուան դեղնութիւնով պատուած, անոր ձեռքին տակ էր, հլու կամարար մը: Դէպքը, որ վճռուած էր պղտիկ շշուկի մը պէս անցնելու, որոշ ուղղութիւն և նշանակութիւն ունեցաւ, և, զէնքերու ու սուխներու առջև, յեղափոխականի արիւնը քարերուն վրայ սրկուեցաւ: Ճանկիւլեանը չին-

կաւ, բայց իր շրջապատի մարդերը իրմով, իր կատարութեան ազդեցութեամբ, նետուեցան մահուան դէմ՝ մահը արհամարհելով:

Երբ դատապարտութիւն, բանտարկութիւն, իրենց սիրած արհաւիրքներէն ետքը, պաշտօնական շրջանակներու մէջ հանդարտութիւն բերին, Խորէն Պատրիարքը, սթափած դէպքին բերած ազդեցութենէն, սկսաւ քիչ քիչ անտարբեր աչքով դիտել յեղափոխութիւնն ու յեղափոխական դէմքերը: Իրեն համար մէկ հատիկ երկիրը զէմք երեւցած էր, — ձանկերկեալ: Ուստի կըսէր. «ձանկերկեանը Արեւիկէն, ա՛լ յեղափոխութիւն չկայ հայոց մէջ»: Բարեբախտաբար, յեղափոխութիւնը կար ու կը մնար՝ ձանկերկուն մէջ՝ ամփոփուած վագրի մը պէս, որ յոգնած կը քնանայ, և սակայն, ձանկերկեանն ալ այդքան մեծ նշանակութիւն ունեցած էր:

Հիմա, երբ ծանր շունչ մը կը փչէ խորշակի պէս, սիրելի՛ ընկեր, կրանիդէ արձանիդ վրայ չի կրնար խամրել այն ծաղիկներ որ հոգիիդ ցովմունքները եղան: Թող խաբուին միամիտները, դուն անոնցը չես, քու ընկերներդ, որոնց հետ կախազանին սխեմներուն տակէն անցար անխռով, եւ մահուան փսիտը լսեցիք, և անոնք որ ձեզի կը հետեւէին մօտիկէն, անոնք են որ կը դնահատեն ձեզ, անոնք են՝ որ անուղ լսածնուն պէս դող կելլեն ինչպէս բռնկած սիրտ մը իր սիրականի յանկարծական տեսքէն:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Կ. Պոլիս, 11 Յուլիս

Տեղական գործերու վրայ ստեղծեցեալ անդեկութիւնն ալ զփուար է, որովհետեւ հոս ալ լո՛ր բերու հրապարակը՝ հանրային հրապարակներու պէս ամուլ է:

Ջինուորական խուլ պատրաստութիւններ կան: Այս շարժումը որովոր զինուորներուն շքարամ եւ մէյմէկ ամսական տրուեցաւ, թէև ցարդ քաղաքային պաշտօնեաները փարած մը առած չեն: Գնացանները առանձին գումարումներով կը ջանան ընդունիլ ալ կրէտէի առժամայ վարչութիւնը օտար հրամանատարներու ձեռքով. բայց Բ. Գոռը միշտ կըսէ թէ կրէտէի ընդհ. ժողովը, որ կըզգրին վարչութեան մէջ զօրաւոր ձայն մը պիտի ունենայ, ապրտամը կը ճանչնայ, հետեւապէս անոնց իրաւատութիւնը չի կրնար հաստատել: Գերմանիոյ եւ Աւստրիոյ զիսպանները չեն մասնակցիլ զիսպանական գումարումներու:

—Եւ մէյմէ զիսպան չէ խաղաղացած. մէկ կողմանէ զօրք ու ռազմամթերք կը զրկուին հոն: Այլանիւր կողմերն ալ շարժման գրոյցներ կան. ալպանիացիները կատարկին եղիլ թէ ինչո՞ւ համար օսմ. զինուորները հեռացան թեպէտք:

—Ազգային հրապարակն ալ անշարժ է: Միակ կարեւոր խնդիրը Միսի գործն էր. զիսպ օր պատրիարքը ժողովին որոշմամբ բողոքագիր մը սուաւ պալատ՝ Ատլէի թագրիւրին գէմ. պալատէն բերանացի պատասխան ելաւ թէ այդ խնդիրը առ այժմ թող մնայ. պատրիարքին ալ ըսուեցաւ թէ. «Գործը մի՛ խառնչուի»: Օրմանեանի ուղածն ալ առ էր արդէն, որպէս զի ծայրայեղութեանց զինելով իր զիրքը չը վտանգէ: Մնաց որ իրեն համար վերջին պարագան միայն կարեւորութիւն ունի: Կառավարութիւնը ճիշդ Ալեքիսանի բեկումն ալ այսպէս ըրաւ. բաւական ձգձգութիւն յետոյ, իրեններէն ոմանց ըսել արւաւ թէ: «աւստիկ այսչափ ընդդիմացանք օգուտ չըրաւ, մինչեւ ե՞րբ պիտի սպասենք»: Նոյն բանն է որ այժմ կը կրկնուի:

Արդէն յարաբերական խնդիրներէն ոչ մէկը կարգադրուած է ցարդ: Սերաստիոյ ծերունազարդ եպիսկոպոսը, պատուական զէմք մը, ընդունայն կը թափառի հոս բաւական ամիսներէ ի վեր. զոնէ մէկ քանի հարիւր ոսկի կորզելու փոխան այնքան վեհաներու: Ամէն փորձ ապարդիւն ելաւ եւ ն. Սրբազնութիւն կը պատրաստուի մօտեցաւ իր պաշտօնատեղին վերադառնալ: Պատրիարքարանի զիմուսները եւս զեռ ելք մը չունեցան, եւ ընդհանուր կերպով սպասողական վիճակ մը կը տերէ:

—Իրաւէք անշուշտ որ Եզրպոստի հայերը իրենց առաջնորդ ընտրած էին նախորդ Պատրիարք Իզմիրեան Սրբազանը: Խառն ժողովը նկատելով որ ն. Սրբազնութիւնն ասկէց առաջ Եզրպոստ առաջնորդական պաշտօն վարած, ու կլիմայի խտտութեան պատճառով հրաժարած էր, քերեւս այս անգամ ալ չընդունի նոյն պաշտօնը եւ խնդիրը ինքնիրեն լուծուի ըսելով, որոշած էր գրաւորապէս զիմում ընելն. Սրբազնութեան Պատրիարքը այդ գիրը գրած էր: Երուսաղէմէ գրեն թէ Իզմիրեան Սրբազան այս անգամ սուած է իր պատասխանը լակոնական ոճով. «Ազգը ուր որ կանչէ զիս. եւ ինչ պաշտօնի ալ որոշէ՛ պատրաստ եմ ընդունելու»: Հիմա Խառն ժողովը կը խորհի թէ ինչպէս պիտի տեղեկագրէ այս ընտրութիւնը Գրան, քանի որ Արթիւր փաշա ժամանակին զայն իմացուցած էր Ելլաթը պալատը եւ բացառական պատասխան առած էր: Բայց իրաւամբ կը հարցնեն ոմանք թէ ի՞նչ հարկ կար այսպիսի անպաշտօն զիմումի մը. այս հարցը շատերուն շատ բանիւ խորհիլ կուտայ. մեղքը ճիշտներն:

—Միսի խնդիրն հերոսներէն մէկը, ծանօթ սրիկայ մը՝ Կէօքեան Կիրակոս (վարդապետ) Մարտունի մէջ ալ իր շահատակութիւնները շարունակած ըլլալով, կրօն. ժողովը կարգազուրկ ըրաւ զինքը. այս որոշում գոնուանկութիւն պատճառեց:

—Կովկասի հայ դպրոցներու նոր վիճակը հոս մեծ ցաւ պատճառեց եւ ամենուրեք կը քննադատուի կաթողիկոսին թոյլ եւ թոյլատու ընթաց-

քը: Ասիկա ռուսահայերուն ռուսացման սկզբնաւորութիւնը կը նկատուի:

Նիւ-Յորք, 4 Յուլիս

Միացեալ-Նահանգներու 70 միլիոնէ աւելի ժողովուրդը, այսօր, յուլիս 4ին, ո՛չ միայն իր ազատութեան 122րդ տարեդարձը սօսեց, այլ 2,000,000 սուլարի հրահրութիւն մէկ գիշերուան մէջ նետեց դէպի ստեղծազարդ երկնքի կամարը, սօսնելով նաեւ ուրիշ երկու ազգերու—քուպացիներու եւ ֆիլիպպեան կղզեցիներու ազատութիւնը: Իրաւ որ այսօր շատ մեծ ու երջանիկ է Միացեալ-Նահանգներու կառավարութիւնը, բաղադատելով եւրոպական կեղծ, շահամուլ եւ անսիրտ կառավարութիւններուն հետ: Այս երկրին ժողովուրդը շատ աւելի պիտի մեծնայ, շատ աւելի պիտի երջանկանայ, երբ անգամ մը իր անտեսական ազատութիւնն ալ ձեռք բերէ: Անթիւ միլիոնատէրերու, բազմաթիւ մենաշնորհեալ ընկերութիւններու, անխիղճ գործարանատէրերու կողպուածը, շահագործումը եւ գործաւորներու շարժարանքը երբ վերջանան, այլեւս տիպար երկիր մը պիտի ըլլայ: Յաջորդ յուլիս 4ներուն, երբ անտեսական ազատութեան առաջնապահան ազատութեան հետ, Միացեալ-Նահանգներու ժողովուրդին իրական ազատութեան օրը հնչած պիտի ըլլայ: Եւ այս ազատութիւնը մօտիկ ապագայի մէջ տօնուեցուն ո՛չ թէ երազողներ կան, այլ հաստատ հաւատացողներ: Երկու օր առաջ նշանաւոր Հըրսթ, ձըրնըլի տէրը եւ խմբագիրը, այսպէս կը գրէր—«Ամէն բան յատուկ կարգով մը կատարուած է եւ պիտի կատարուի Միացեալ-Նահանգաց պատմութեան մէջ: Օր մը մենք զմեզ ազատեցինք, օր մը մեր աչքին առջև եղող գերիները ազատեցինք: Այսօր ալ մեզմէ հետո կողող ազգերուն օգնութեան ձեռք կուտանք որ ազատին, վաղն ալ երբ կարոյ բարձունքին վրայ հայկական հին գրօջակը պարզել տանք, անկէց ետք կը դառնանք կրկին մենք մեզի, ու, մեր սնտեսական ազատութեան մեծ գործը

ՎԱՐԳ-ՊԱՏՐԻԱՐԿԻ ԳԵՇԱՍԿԱՐԱՆԸ (25)

Մինչ այդ պատրաստութիւնները էինք տեսնում, եթէ չեմ սխալուում սեպտեմբերի երկրորդ կէսում զարկվեց փաստափան Խաչիկը: Այդ առաջին եւ բոլորովին աջող գործն էր: Խաչիկի համար սերորիստ նշանակված էր ոչ թէ պատանի Արմենակը այլ նրա հասուն ազգականը, լաւ չեմ յիշում հօրեղբայրը թէ մօրեղբայրը: Երբ այդ երիտասարդի խմբագրի գտնում է նրա մօտ եւ յանձնարարում այդ գործը կատարելու, Արմենակը ականջ է դնում նրբանց, ինքն իրան վճռում ազգականին հետեւելու եւ այդ նպատակին հասնելու համար Արմենակը թոյնում է վահրամ Տատեանի դաշտը, կարծեմ բաւական թանգագին, որի վրա եւ զրօշված են լինում վահրամի անուն եւ ազգանունն սկզբնատուրը: Սպանումը կատարելու օրը՝ Արմենակը հեռուում է իր ազգականին եւ երբ առաջինը ասրճանակը արձակում եւ փախչում է, դաշտը խրում է Խաչիկի կողք եւ շատ հաւանական է որ առանց Արմենակի անակցութեան գուցէ

Խաչիկը ողջ մնար: Արմենակը այդ օրը չէ ձերբակալվում:

Գործի թողած սպաւորութիւնը արդէն աննկարագրելի էր: Հայ ժողովրդը հրճվում էր, օտարազգիները զարմանում եւ հիանում, իսկ թուրք կառավարութեան կատաղելուն չափը չը կար. Նաղիլը ամէն մի ժամ Սուլթանի մօտ էր կանչվում եւ խիստ հրամաններ ու աւելի մեծ իրաւունքներ ստանալով վերադառնում էր իր լրտեսներին տարածում Պօլսի բոլոր անկիւնները:

Եւ այդ բոլորից յետոյ, մի քանի հոգի էին ձերբակալվել, որոնցից մէկն էր Սուքիասի տերորիստը Յակոբը, որ բաւական տանջել էին: Իսկական դաւադիրներ զեռ չէին գտել, որովհետեւ գործին մօտիկ ծանօթ ու մատնիչ մարդիկ զեռ բռնված չէին:

Սեպտեմբերի վերջին Վառամանի հետքը գտան եւ սկսեցին նրան փնտսել, մի օր էլ խուզարկեցին իրանց սուանը եւ չըջապատեցին նշանակիչ ընակարանը ուր եւ իսկապէս պահված էր Վառաման, բայց նրա հարսնացուի պաղարիւնութիւնը եւ հնարագիտութիւնը ազատեցին Վառամանին. նրան փախցնել տուինք

մի օտարազգիի միջոցով:

Այդ միջոցներում յարմար դատվեց իմ բնակարանս փոխել, այդ բնակարանում ապրում էր մի բողոքական, Սերաստացի կօշկակար, Մկրտիչ անունով երիտասարդ:

Մկրտիչը գիտէր մեր ինչ մարդ լինելը. վերջերք մասամբ միացաւ մեզ եւ փոքրիկ յանձնարարութիւններ էր կատարում: Բացի զրանից ինձ լաւ ճանաչում էր «փոստաճի» երգչկայցի Արմենակը: Եւ թէ թերթեր եւ թէ նամակներ էր ստանում. Սուրաթը նրա վրա կատարեալ վրաստանութիւն ունէր: Վառամանի հեռանալուց յետոյ նա սկսեց մեր կապերը պահպանել: Մամբրէն, որը առաջ ինձ հետ բաւական յաճախ էր տեսակցում, վերջին ժամանակներում շատ սակաւ էր այցելում: Կուսիտէի միւս անդամներին հետ տեսնում էինք միայն ժողովների ժամանակ: Նրանց հետ ես ոչ մի ժողովի չեմ գնացել, եւ նրանց միջոցաւ ոչ մի մարդիկ հետ չեմ ծանօթացել: Արիիարականների կողմից նշանակված մարդիկն էլ այդ խառն օրերում ինձնից խուսափում էին. առենք նրանցից մէկին, Արիիարի մանկլաւիկ սանից ես բոլորովին զղլել

էի իրան վաւաչտութեան եւ իգամուրթեան պատճառով: Իմ տանտիրուհու հարսը բաւական զեղեցիկ եւ մանկահաս կին էր: Մի օր այդ դրագետ յեղափոխական պարտը իրան թոյլ էր տուել շատ ազատ վարմունք գէպի երիտասարդ տանտիրուհուն: Իմ բացակայ ժամանակ, ու երբ ձեռնց յետոյ տունն եկայ, երիտասարդ տիկինը ինձ գանգաւորեց եւ խնդրեց այդ սեսակ մարդկանց էլ տուն չընդունեմ, իսկ եթէ զրանցից չեմ կարող բաժանվել բնակարանս թողնեմ:

Գրադէտ յեղափոխականի այս վարմունքը շատ վատ սպաւորութիւն թողեց ինձ վրա. եւ երբ մի քանի ընկերներին այդ բանը յայտնեցի, նրանք մեծ մասամբ առարկեցին որ Պօլսում այդ սովորական բան է: Բողոքական Մկրտիչն էլ իմացել էր այդ գէպը եւ չափազանց բորբոքվել: Նա ինձ ասում էր. «Եղբայր, ասանկ ալ բան կըլլայ: Ինքը որ բարով զրագետ եւ յեղափոխական է, բարձր դադափարները քարոզիլ եւ տէր, սակայն չի վարանիր հայ ընտանիքի պատուին զպիլ:»

(Շարունակելի)

կակսինք... : Հայուն արեւը այս- չափ հեռուոր «արեւմուտքէն» պիտի ծագէր...

Սպանիոյ արեւն ալ մարած է : Ա- նոր գիշերը սկսած է, առանց ցորե- կի մը յաջորդելուն : Ամէնուրեք ջախջախուած է : Անոր Սաղաղակա- նի նաւատորմիղը ջախջախուելէն ետք, այսօր Ասլանախանի զօրաւոր նաւատորմիղն ալ ջարդուփշուրը ե- ղաւ : Սպանիան ա'լ գրեթէ նա- ւատորմիղ չունի, բացի ծովակալ Քամարաի հրամանատարութեան տակ գանուող խարխուղ նաւերէն, որոնք Ֆիլիպինները երթալու հա- մար ճամբայ ելած են, բայց դեռ Սուէզ կերբրան :

Արդէն հրատարակած էք անշուշտ սպանիացի Սերվերա ծովակալի նա- ւատորմին սպասուպուռ փճացուժը Սանթիակոի առջեւ՝ ամերիկեան նա- ւատորմին կողմէ :

Եւ շատ զարմանալի է որ այս ծո- վային մեծ պատերազմին մէջ ամե- րիկացիներէն միայն մէկ նաւաստի սպանուած է ու երկուք ալ վիրա- ւորուած են :

Բայց Սանթիակոի առջեւ, ցամա- քին վրայ սեղի ունեցած պատե- րազմին մէջ ամերիկացիք նոյն թախտը չունեցան : Զօրալար Շաֆ- թըրի հրամանատարութեան տակ պատերազմող բանակէն աւելի քան 1500 զօրքեր ընկած են Տօնիբու գնտակներէն : ասոնց մէջ են նաեւ Ամերիկայի հարուստ ընտանիքներու զաւակներ :

Մովային նախարարութիւնը հրա- մայեց ծովակալ Վաթսընին որ նա- ւատորմիղով մը անմիջապէս պատ- րաստուի սպանիական եզերքները երթալու, Քատիլը եւ ուրիշ ծովե- զերքի քաղաքներ ոմբակոծելու հա- մար : Ամէն մարդ կը յուսայ որ երբ թնդանօթի թնդիւնները լսուին Քատիլի առջեւ, Սպանիան խաղա- ղութիւն պիտի խնդրէ անմիջապէս : Վերջին պահուն եկած հետապի- րներ կը ծանուցանեն թէ Ֆիլի-Սօր- քէն երկու օր առաջ մեկնող թրանս- ակալութիւնը ընկերութեան Պոլսոյն- եր չօգնաւ, բախելով ուրիշ նաւի մը, ովկիանոսի բացըրը ընկզմած է : 600 հոգիի մօտ ճամբորդ եւ նաւաս- տի խեղդուած են : 150 հոգի ազատ- ուած են : ճամբորդներուն մէջն էին նաեւ Լօրէնսի Տ. Ստեփան քահանան ուրիշ 10ի չափ հայերու հետ : Սուլ- թանին «փէշիլիվան» Եուսուֆն ալ այս նաւին մէջն էր ու խղճուած է : Թ. Չ.

Ռուսմոյ, 5 Յուլիս
Տեղւոյս ազգ. վարժարաններու քննութիւնները յունիս 28ին վեր- ջացան : Ինչպէս հայերէնի, նոյնպէս մնացած բոլոր առարկաներուն մէջ երկուսն աշակերանները ցոյց տուին փայլուն յաջողութիւն : Այսօր եկեղեցիի աւարտումէն յե- սոյ, կատարուեցաւ պարզեւարջ- խութեան հանդէսը : Գպրոցի սրահը լեցուած էր խուռն հանդիսականնե- րով : Վկայականներու բաշխումէն ետքը, զպրօցներու տնօրէնը կար- դաց տեղեկագիրը, ուսկից երեւցաւ թէ զպրօցը ունի 197 երկուսն աշա- կերտ, 124ը մանչ եւ 73ը աղջիկ : Գպրոցը երկգասեան ըլլալով սղա- յոց վարժարանը ունեցած է ե- րեք նախակրթարան եւ երկու դա- սարան : Իսկ աղջկանցը երեք նա- խակրթարան եւ մէկ դասարան : Տարւոյն ընթացքին մէջ տեղի ու- նեցած են 16 ուսուցչական ման-

կավարժական ժողովներ : Յետոյ Պ. Սապահ-Գիւլեան զպրօցի նշանա- կութիւնը պարզեց եւ ըսաւ թէ հոն ուր հայը գաղթականութիւն հաստատած է, փոյթ չէ ըրած իր ապագայ սերունդին պահպանման միջոցները խորհիլ եւ այսօր սխուր կերպով մեր աչքին առջեւ կը պար- զուի Ռուսմանիոյ երկու հարիւր հա- զար հայերուն ողբալի վիճակը, ո- րոնցմէ ոչինչ մաս մը միայն մնա- ցած է՝ մեծամասնութիւնը ձուլուած ըլլալով տիրող տարրին հետ թերեւս պուլկարահայն ալ մաստնախի նոյն կորստին, որուն կը նպաստեն նաեւ կառավարութեան օր ըստ օրէ սահ- մանափակող տնօրինութիւնները, եթէ այստեղի հայութիւնն ալ եկե- ղեցին վեր գասէ զպրօցէն :

Հանդէսը աւարտեցաւ բանախօ- սութեամբ հողաբարձութեան ատե- նապետ Տ. Մարտիրոս Տէրաթեանի, որ նկարագրեց զպրօցին արդի յա- ռաջագէտ վիճակը եւ սպագայի մա- սին յոյսեր պարզեց. եւ շնորհակա- լութիւն յայտնեց տնօրէնին եւ ու- սուցչական մարմնին :

Մասնաւոր ուշադրութեան առար- կայ եղաւ աշակերտութիւններուն կող- մէ պատրաստուած ձեռագործներուն ցուցադրութիւնը :

Արտաւագ

Քհօսեկնճե, 9 Յուլիս

Մեր քաղաքը մինչեւ հիմա բնա- օ եւ է բարեգործական, կրթական կամ ուրիշ անունով ընկերութիւն ունեցած չէ :

Շատ անգամ առաջարկներ եղած են տեղացիներուն հաստատելու այդ կարգի մարմին մը, որ խորհի եւ միջոցներ ձեռք առնէ ազգային կիսնքի զարգացման համար : Դժ- րախտարար միշտ անտեղի առարկու- թիւններ յարուցուելով գաղափարը չէ կրցած իրագործուիլ :

«Տեղական օրէնքները չեն թոյ- լատրեր» կրեն, ինչ որ հիմնապէս սխալ է Ռուսմանիոյ պէս ազատ երկրի մը համար :

Ուրիշներ՝ «հայերը խեղճ են, այդ- պէս բաներու ժամանակ չունին» կա- ռարկեն, չմտածելով թէ նոյն իսկ մեր դիրքին մէջ գտնուողները են որ ամենէն աւելի պէտք ունին հաւա- քական ուժերու :

Իսկ անոնք որ «Հայրենիք պիտի երթանք. ինչ պիտի ընենք ընկե- րութիւնը» կը գոչեն, ստորին անձ- նատիրութեամբ չեն խորհի որ եթէ իրենք պիտի մեկնին, ուրիշներ հարկաւ պիտի գան յաջորդել ի- րենց, մնացողներ պիտի ըլլան, ո- րոնք միշտ պէտք պիտի ունենան ազգային ընկերութեան մը բարեք- ներուն :

Ընկերութիւններու օգուտին վը- րայ պնդելը աւելորդ է. թո՛ղ աշ- խարհի մնացեալ մասը, բաւական է աչքի առջեւ բերել Ամերիկայի հա- յերուն ազգային հաստատութիւննե- րը, որոնք միայն եւ միայն իրենց բազմութիւն ընկերութիւններուն ար- զիւնք են, համարուելու համար թէ արտասահմանի հայը որքան պէտք ունի անոնց, ազգաստանամի, լա- րանի, ընթերցարանի, որոնք ա- ոթիթ տան նոյն տեղւոյն հայերուն փրկարար միջնորդութիւն մը մէջ յաճա- խակի խմբուիլ, իրենց ազգին գոր- ծերուն վրայ մտածելու համար :

Փ. Ճիկրեան

Օ Ռ Կ Ա Ն (°°°)

—)(—

Հնչակեան վերակազմեալ կու- սակցութեան օսկան «Մարտի յուլիս 6ի թիւին «Հիւանդու- թիւն մը» խորագրով յօդուածէն կը քաղենք հետեւեալ քանի մը մասերը .

«Այս ապուշներուն մէջ առա- ջըն տեղը կը գրաւէ Հաճին, «որ հազիւ թէ հասարակ կարգալ «մը գիտէ, ան ալ կասկածելի, «ու ելեր միտքը գրած է թէ «ժողովրդին ներկայացուցչն է, «անոր առաջնորդը պէտք է «հանդիսանայ... Աս ճիհան- «կիւլեանը առեւօք Պօլիս Չախ- «մախճիներուն գլուխը սփոր- «թայի մէջ հատը 5 շրուշի բա- «պուճ կը ծա էր. «պանքա բօ- «թա, կէօմրիկ մալը, պէշ գու- «րուշա, բանթօֆլաճի» և ետե- «ւէն խանութ մը բացաւ և ջուր «խահուէ կը ծախէր» :

«Յուլիս 15ի ցոյցին մասնակ- «ցող բազմութեան մէջ կը գրու- «նուէր և առ Հաճի Սրթին ճի- «հանկիւլեանը. չենք գիտեր թէ «ի՞նչ պատճառաւ շարաշար կը «ծեծուի մայր-եկէզեցիին բակը : «Չզային զրգուումին տակ պատ- «րիարքարանի սրահը կը կոտրէ «թուրան, ու ետքէն ալ Աշըգ- «եան պատրիարքին կառքը ա- «պաստանելով փախչիլ կուզէ, «բայց ինչպէս լըլլայ օճիքը «ձեռք կուտայ գիպուածով. դա- «տարանին առջեւ կուրանայ ը- «րածը, բայց Տաճատի, Սուքի- «ասի, լուսարարին յայ նու- «թիւնները կը հա տատեն թէ «թուրան կոտորչն է. բերդար- «գելութեան կը դա ապարտուի. «անցած տարի ալ աշատեցաւ» :

Ու ասանկ շարք մը աւելի գձուճ ու թուեաւոր լորձանքնե- րու :

Հիմակ ալ կարգանք «Մարտի Ա. թիւին մէջ նոյն ձանկիւլեանի մասին գրուածը .

«Արեւայի բանտերուն մէջ «եօթը սարի փատելէ ետքը այ- «սօր Եւրոպա լը գտնուի ա՛յն որ «հայ ժողովրդին աղատութեան «անդրանիկ մարտին քաջարի «գրօշակակիրը հանդիսացաւ : «Ֆարութիւն ձանկիւլեան 1890 «յուլիս 15ի Հնչակեան մեծ բո- «ղոքին օրը խիզախ պատերազմո- «ղը եզաւ և տեղն ու տեղը իսկ «ձեռքակալուելով մահուան դա- «տապարտուեցաւ զինուորական «ատեանէն : Այս վճիռը փոխ- «ուեցաւ շղթայակապ մշանչեանա- «կան բանտարկութեան : Անկէ «իվեր քանի մը անգամ թէի «ընդհանուր մոռացում հոչակ- «ուեցաւ Թուրքիոյ մէջ եւրոպա- «կան ճնշումով, սակայն ձան- «կիւլեան կը մնար իր շղթանե- «րովը պրկուած : Այս անգամ իր «անունն ալ աշատ արձակուողնե- «րու ցուցակին մէջ անցաւ, իր «ծննդավայրը, Վան, զրկուե-

«լու որոշումով, այսինքն ճամ- «բան ոչնչացնելու գիտումով : «ձանկիւլեան բաւական ճարպիկ «գտնուելով ինքզինքը նետեց «հիպրոս ուսկից անցաւ Եգիպ- «տոս և անկէ Բարեղ ուր կը գա- «նուի հիմա և կը դարմանէ իր «խանգարուած առողջութիւնը» : «Մարմնով թէի տկարացած, «ձանկիւլեան կը մնայ հոգիով «անընկճելի, սրտով խանգաւառ, «մտքով հաւատացեալ յեղափո- «խականը» :

Վերեւի երկու հակիմաստ գը- րութիւնները ցոյց կուտան թէ «Մարտի խմբագրապետը որ- քա՞ն անխղճահար ու անզգուշ է երբ խնդիրը հակառակորդ մը ջախջախելու վրայ է : Բայց պէ՞տք է որ կատաղութիւնը յիշողութիւնը կորսնցնել առաւ- աստիճան չեղտուած ըլլայ խըմ- բագրի մը նկարագրին մէջ, եւ զայն ծագրելի ընէ ամբողջ աշ- խարհի առջեւ, դժբախտաբար իրեն հետ մէկտեղ փափուկ գիրքի մը ենթադրելով ամբողջ կուսակցութիւն մը որ այնքան կրնար բարգաւաճիլ եթէ իր զեկը աւելի բանաւոր անձերու վստահէր :

ՍԽԱԼ ՀԱՍԿԱՅՈՂ ՈՒԹԻՒՆ

—)(—

Ճարտարապետ Պ. Թորոս Թա- րամանեան խմբագրութեանս ներկայանալով յայտարարեց թէ ինք չէ հեղինակը «այն շէնքին որուն ճարտարապետութիւնը պատիւ կը բերէ իր փափկաճա- շակ հեղինակին» ըսած էինք, և թէ ինք բնաւ համաձայն եղած չէ այդ անհարկի շինուածքին զետեղմանը տեղւոյն եկեղեցիին ու զպրօցին մէջ տեղը :

Աւելորդ է ըսել որ մենք «փափկաճաշակ հեղինակ» ըսե- լով Պ. Թորոս Թորամանեանը չենք ակնարկած :

Ք Ր Ո Ն Ի Կ

—)(—

Կողոպուտի դրութիւնը հեռ- զհեռէ զարգացում կը ստանայ օսմ. կայսրութեան մէջ, ոչ թուրքերն ալ կը միտին ազատել այդ դիրքին սիպեմէն : Տիգր բանակերտի Ասորի քահանանե- րը, իրենց պատրիարքէն խրա- խուսուած, կը նկատին Լիճէի մէջ գտնուած Մակարայեցոց վանքին տէր գառնալ և Երեք աչ սորի վարդապետներ և բազմա- թիւ գործաւորներ զրկուած են հոն նորօգնու համար այդ վան- քը որ կայս. հրովարտականութիւնը դարերէ ի վեր հայ ազգին կը պատկանի : Տեղւոյն պապն. տե- զապահին և պատրիարքարանի բողոքներուն վրայ դուռը դադ- րեցնել տուեր է այդ նորոգու- թիւնները և կը յուսացուի թէ մօտերս բոլորովին վաւաստին այդ տարօրինակ ստորինքը : —Շուժուի հանրածանօթ Տ.

